# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ ՍՏԵՓԱՆ ՊԻՐՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ-Ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/67 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | MAYFIELD® Infinity Skull Clamp System կամ MAYFIELD® Ultra 360 կամ DORO® QR3 Headrest System կամ DORO® Multi-Purpose Skull Clamp QR3 | MAYFIELD® Infinity Skull Clamp System կամ MAYFIELD® Ultra 360 կամ DORO® QR3 Headrest System կամ DORO® Multi-Purpose Skull Clamp QR3 | Integra LifeSciences կամ Black Forest Medical Group / Pro Med Instruments | Համակարգը նախատեսված է նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ հիվանդի գլխի կոշտ ֆիքսացիայի, ինչպես նաև վիրաբուժական միջամտությունների ժամանակ գլուխը տարբեր հարթություններում դիրքավորելու համար: Համակարգը պետք է նախտեսված լինի նյարդավիրաբուժական միջամտությունների համար և ապահովի գանգի կայուն եռակետային ամրացում: Համակարգի հիմնական կառուցվածքային տարրերը պետք է պատրաստված լինեն կարծրացված մակերեսով ալյումինե համաձուլվածքից:Համակարգը պետք է ներառի՝ Գանգային ֆիքսատոր (Head Clamp) – 1 հատ, Ֆիքսացիոն թև՝ մանկական (Rocker Arm - Pediatric) - 1 հատ, Վիրահատական սեղանին ամրացման հիմք (Base Unit) - 1 հատ, Դիրքավորման ադապտեր (Swivel |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Adapter) - 1 հատ, Գելային գլխադիր (Gel Pad Headrest) – 1 հատ, Վիրահատական սեղանի ադապտեր (Table Adaptor) - 1 հատ, Գանգի կոշտ ֆիքսացիայի մեծահասակների պիների հավաքածու (Adult Skull Pin) - 3 հատ, Գանգի կոշտ ֆիքսացիայի մանկական պիների հավաքածու (Pediatric Skull Pin) - 3 հատ, Գանգի ոչ ինվազիվ (փափուկ) ֆիքսացիայի հավաքածու - 1 հատ։ Համակարգը պետք է ապահովի գլխի դիրքի ճշգրիտ կարգավորում՝ հորիզոնական հարթությունում առնվազն 360° և ուղղահայաց հարթությունում առնվազն 270° պտտման հնարավորությամբ։ Համակարգը պետք է ապահովի հիվանդի գլխի ֆիքսացիա պառկած մեջքի վրա (supine), փորի վրա (prone) և կողքի (lateral) դիրքերում: Համակարգի բաղադրիչները պետք է համատեղելի լինեն DORO և Mayfield համակարգերի հետ, ինչպես նաև այլ համակարգերի, որոնք համապատասխանում են նույն տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջներին։ Համակարգը պետք է ապահովի գանգի դիրքի արագ ֆիքսում և ազատում, ինչպես նաև հնարավորություն տա միացնել լրացուցիչ նյարդավիրաբուժական ռետրակտորային համակարգեր՝ ինտեգրված ամրացման ուղեցույցների միջոցով։Համակարգը պետք է ունենա առնվազն 140 մմ աշխատանքային խորություն։ Համակարգը պետք է հագեցած լինի ֆիքսացիոն ուժի վերահսկման մեխանիզմով՝ տեսանելի ցուցիչով, իսկ առավելագույն ֆիքսացիոն ուժը պետք է կազմի առնվազն 360 Ն 0,3% շեղումով: Համակարգը պետք է ունենա լայնության կարգավորման հնարավորություն առնվազն 12–24 սմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | միջակայքում: Բոլոր բաղադրիչները պետք է ենթակա լինեն բազմակի ստերիլիզացման ավտոկլավավորման եղանակով, իսկ ֆիքսման համակարգը պետք է ունենա արագ արձակման և արագ բլոկավորման մեխանիզմ՝ բացառելով ինքնաբերական տեղաշարժը վիրահատության ընթացքում: Արտադրանքը պետք է պետք է համապատասխանի (EU) 2017/745 MDR պահանջներին և ունենա Եվրոպական ստանդարտներին համապատասխան(CE) սերտիֆիկատ: Արտադրողը պետք է ունենա գործող ISO 13485:2016 որակի կառավարման համակարգի հավաստագիր: Համակարգը պետք է մատակարարվի շահագործման ուղեցույցով: Երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն 24 ամիս: Սարքավորումը պետք է լինի նոր, նախկինում չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ա/Ձ ՍՏԵՓԱՆ ՊԻՐՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՌՆԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/67 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |